ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/35

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝

«ԻԱՅՍՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Քոյլոյանի (լիազորագիր, տրված՝ 13.03.2020թ.)

քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար գործիքների և ցանցային սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/010» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «ԻԱՅՍՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ի կողմից 30.03.2020թ. ներկայացված (30.03.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/35 բողոք), պարզեցի հետևյալը.

1.«ԻԱՅՍՏԵԼԵԿՈՄ» ՍՊ ընկերության կողմից ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ԻԱՅՍՏԵԼԵԿՈՄ» ՍՊ ընկերությունը (հետայսու նաև՝ Ընկերություն) 30.03.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2020թ.

կարիքների համար գործիքների և ցանցային սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/010» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Հայտերի բացումը տեղի է ունեցել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, 2020 թվականի մարտի 10-ին ժամը 10:00-ին:

Ի թիվս այլ ընկերությունների՝ Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԻԱՅՍՏԵԼԵԿՈՄ» ՍՊԸ-ն:

13.03.2020 թվականին տեղի ունեցած նիստում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (հետայսու նաև՝ Հանձնաժողով) կողմից կայացվել է բոլոր մասնակիցներին 2020 թվականի մարտի 19-ին ժամը 11:00-ին առաջարկված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների հրավիրելու որոշում:

Բանակցություններին իր մասնակցությունն է ապահովել Ընկերությունը՝ ի դեմս Ընկերության ներկայացուցիչ Դավիթ Տուխիկյանի, որը մասնակցելով բանակցություններին 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով առաջարկել է հետևյալ գները՝ 2-րդ չափաբաժնի մասով՝ 11000 (տասնմեկ հազար) ՀՀ դրամ, 5-րդ չափաբաժնի մասով՝ 45000 (քառասունհինգ հազար) ՀՀ դրամ:

Առաջարկված գները Հանձնաժողովի կողմից չեն քննարկվել ինքնարժեքից ցածր ներկայացվելու պատճառաբանությամբ և նույն նիստի համապատասխան որոշմամբ Ընկերությունը 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Ընկերությունը նշել է նաև, որ Ընթացակարգի շրջանակներում ձեռքբերվող գնման առարկաների վերաբերյալ Պատվիրատուի կողմից սահմանված կարգով հաստատված և հրապարակված գնումների պլանը առկա չէ:

Ընկերության կողմից վկայակոչվել են հետևյալ փաստական և իրավական հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 26-րդ կետի 10-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ գնահատում է ներկայացված հայտերը՝ ներառյալ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, դրանց գնահատման արդյունքներն արտացոլում է գնահատման թերթիկներում և իր ստորագրությամբ հաստատում դրանք:

Կարգի 40-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում՝

1) հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը.

2) հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների

նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ՝

- միևնույն գնման առարկայի բնութագրերով տվյալ օրացուցային տարում արդեն իսկ կազմակերպվել է առնվազն մեկ գնման մրցակցային ընթացակարգ, որը չկայացած է հայտարարվել մասնակիցների ներկայացրած գները գնման հայտով սահմանված գինը գերազանցելու հիմքով պայմանավորված.

- ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում: Ընդ որում համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրն ընկած ժամանակահատվածով: Սույն պարբերության համաձայն կնքված պայմանագիրը լուծվում

է, եթե կնքելուն հաջորդող երեսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում.

է. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, բացառությամբ սույն ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված դեպքի:

Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանը հաստատվում է բյուջետային ծախսերի գերատեսչական և գործառնական դասակարգմամբ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

ՀՀ կառավարության 13.04.2017թ «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման եվ հրապարակման կարգը հաստատելու մասին» N 390-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ 4-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուի ղեկավարի կողմից գնումների պլանը հաստատվում է մինչև տվյալ տարվա փետրվարի 1-ը՝ բացառությամբ սույն կարգի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված դեպքերի:

Կարգի 5-րդ կետի համաձայն՝Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվելիք գնումների պլանը հաստատվում է յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումները հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ առանձին հավելվածով:

Կարգի 6-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ու Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված պետական կառավարման մարմինների արտաբյուջետային միջոցների հաշվին կատարվելիք գնումների պլանները հաստատվում են արտաբյուջետային միջոցների նախահաշիվները հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ առանձին հավելվածով՝ բացառությամբ սույն կարգի 7-րդ կետով նախատեսված դեպքերի:

Կարգի 9-րդ կետի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ դրանում կատարված փոփոխությունները և լրացումները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով հրապարակում է տեղեկագրում:

Ընդ որում, գնումների պլանում կատարված փոփոխությունները և լրացումները տեղեկագրում հրապարակվում են գնումների պլանի ամբողջական տեսքով:

Վերոհիշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Ընկերությունը հանգել է այն եզրակացության, որ բանակցությունների ժամանակ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը չքննարկելու որոշում ընդունելով Հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ, քանի որ չքննարկելու դեպքում Հանձնաժողովը չէր կարող եզրակացնել, որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը ինքնարժեքից ցածր է:

Ընկերությունը նշել է նաև, որ Ընկերության հայտը՝ հիմք ընդունելով Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը և հրավերի 5.1 կետը և հաշվի առնելով Ընկերության կողմից բանակցությունների ժամանակ ինքնարժեքից ցածր գնի նվազեցում իրականացնելու փաստը, Հանձնաժողովը Ընկերության հայտը պետք է գնահատեր, որպես հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող և այդ հիմքով մերժեր Ընկերության կողմից ներկայացված հայտը:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում

պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Սույն իրավական նորմերի վերլուծության արդյունքում Ընկերությունը փաստել է, որ տեղեկագրում հրապարակված գնումների պլանի առկայության դեպքում նոր միայն կարող է Պատվիրատուն սկսել գնումների գործընթաց և միայն սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է հանդիսանում գնումների կազմակերպման իրավական հիմքը:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ, Ընկերությունն արձանագրել է, որ Պատվիրատուի կողմից Ընթացակարգի շրջանակներում ձեռքբերվող գնման առարկաների մասով սահմանված կարգով հաստատված և հրապարակված գնումների պլանի բացակայության արդյունքում գնման գործընթացը կազմակերպվել է առանց իրավական հիմք, ուստի հաշվի առնելով նշվածը այն պետք է հայտարարվի չկայացած:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/010» ծածկագրով Ընթացակարգի Հանձնաժողովին ընդունելու հետևյալ որոշումները.

1.1. Վերացնելու կամ չեղարկելու 19.03.2020թ տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության գնային առաջարկը չքննարկելու վերաբերյալ կայացած

որոշումը և Պարտավորեցնել Հանձնաժողովին ընդունել որոշում Ընկերության հայտը սխալ գնային առաջարկ ներկայացնելու հիմքով մերժելու վերաբերյալ կամ

1.2. առանց իրավական հիմքի կազմակերպված Ընթացակարգը հայտարարել չկայացած:

«ԻԱՅՍՏԵԼԵԿՈՄ» ՍՊ ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 02.04.2020թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Պատվիրատուն ի պատասխան Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 30.03.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/2/4772-2020 գրության՝ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը տրամադրելու պահանջի վերաբերյալ, հայտնել է, որ ներկայացնում է «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/010» ծածկագրով Ընթացակարգին առնչվող փաստաթղթերը, այդ թվում՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տարեկան գնումների պլանում կատարված համապատասխան փոփոխությունը և գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում հրապարակված փոփոխության հղումը :

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 02.04.2020թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2020/35 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/35 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/010» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել է ***03.03.2020թ.:***

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ԻԱՅՍՏԵԼԵԿՈՄ» ՍՊ ընկերության կողմից 30.03.2020թ. ներկայացված բողոքը, «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/010» ծածկագրով Ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, գտնում եմ, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **տեղեկագիրը** նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները**, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն **հրապարակում է տեղեկագրում**, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում.

2) **գնման գործընթացի կազմակերպում** (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման**

օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ <u>նաև հրապարակված,</u> գնումների պլանի առկայությունն է:**

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով <u>գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում</u> գրավոր սահմանվում են՝**

1) **պատասխանատու ստորաբաժանում,** և

2) **գնումները համակարգող**

3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց:

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա **<u>գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում</u> պատասխանատու ստորաբաժանումը՝**

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը:…

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/010» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվել է ***<u>03.03.2020թ.:</u>***

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը ԳԲՔԱ-ՆԳ-2020/35 բողոքի քննության շրջանակներում դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով տրամադրել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպված «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/010» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաների մասով հաստատված գնումների պլանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն

տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող համապատասխան հղումը և/կամ կայքից արտատպված փաստաթուղթը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Պատվիրատուի կողմից տրամադրված ու տեղեկագրում որպես գնումների պլան հրապարակված տեղեկատվությունը և արձանագրել, որ Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում ***22.01.2020թ.*** հրապարակվել է 2020 թվականի գնումների պլանում փոփոխությունների և/կամ լրացումների մասին թիվ 20.5 ծանուցումը՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի 20 մայիսի N 231-Ն հրամանով հաստատված գնումների պլանում փոփոխություններ և լրացումներ կատարելու ծանուցման օրինակելի ձևին համապատասխան, մինչդեռ արձանագրում եմ, որ առկա չէ ՀՀ կառավարության 2017 թվականի 13 ապրիլի N 390-Ն որոշմամբ հաստատված «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգի» համաձայն և սահմանված պահանջներին համապատասխան տեղեկագրում հրապարակված գնումների պլանը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/010» ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, որի արդյունքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները, ուստիև գտնում եմ, որ Ընթացակարգը պետք է հայտարարվի չկայացած:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընթացակարգն ի սկզբանե կազմակերպվել է առանց իրավական հիմքի, ուստիև այն հայտարարվում է չկայացած, հետևաբար նման պայմաններում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն որոշման շրջանակներում քննության առարկա չի դարձնում բողոքով վիճարկվող Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումների և գործողությունների իրավաչափության հարցը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԻԱՅՍՏԵԼԵԿՈՄ» ՍՊ ընկերության կողմից 30.03.2020թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-20/010» գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին Ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**